



Հաստատված է  
Գիտական խորհրդի կողմից

*[Handwritten signature]*

Լ.Լ. Ազիզբեկյան

19.11.2013թ.

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**  
**«ԵՐԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ**  
**ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**  
**ՌԵԿՏՐԱՏԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույնով սահմանվում է Երևանի գյուղատնտեսական համալսարանի (այսուհետ՝ ԵԳՀ կամ համալսարան) ռեկտորատի կարգավիճակը, կառուցվածքը, կազմը, գործառույթները և գործունեության կարգը:
- 1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են հանդիսանում «Կրթության մասին», «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ԵԳՀ-ի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, կրթության և գիտության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից ընդունված և այլ իրավական ակտերը:

**2. ՌԵԿՏՐԱՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

- 2.1. Ռեկտորատը ԵԳՀ ռեկտորին կից գործող խորհրդակցական մարմին է, որը համալսարանի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում քննարկում է համալսարանի գործունեությանը վերաբերող հարցեր և կայացնում համապատասխան որոշումներ:

**3. ՌԵԿՏՐԱՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

- 3.1. Ռեկտորատի կազմում, ԵԳՀ կանոնադրությանը համապատասխան, ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտոր(ներ)ը, ռեկտորատի քարտուղարը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների ղեկանները և այլ ստորաբաժանումների ղեկավարները:
- 3.2. Ռեկտորատի նիստին անհրաժեշտության դեպքում հրավիրվում են քննարկվող հարցերին առնչվող ստորաբաժանումների ղեկավարներ, կոլեկտիվի անդամներ:
- 3.3. Ռեկտորատի նիստը վարում է ռեկտորը, իսկ նրա բացակայության դեպքում՝ պրոռեկտորը:

- 3.4. Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ամիսը երկու անգամ: Անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ նիստեր սույն կանոնակարգով սահմանված կարգով:
- 3.5. Ռեկտորատի նիստերում քննարկվող հարցերը պլանավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում: Հրատապ հարցերի քննարկումը կատարվում է արտահերթ նիստերում կամ լրացուցիչ կերպով մտցվում է հերթական նիստի օրակարգում:

#### 4. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1. Ռեկտորատն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:
- 4.2. Ռեկտորատի նիստերում քննարկման ենթակա հարցերը ներառում են.
- ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքների,
  - ուսումնական և արտադրական պրակտիկաների,
  - ուսանողների ընթացիկ, կիսամյակային քննությունների կազմակերպման և անցկացման, առարկայական պարտքեր ունեցող ուսանողների վերաքննությունների անցկացման,
  - ուսանողների կուլտուր-կենցաղային, հանգստի կազմակերպման, ուսանողների հետ տարվող աշխատանքների,
  - վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի վճարման, կարիքավոր ուսանողների ուսման վարձը գեղջելու,
  - ուսման գործընթացի կազմակերպման, տեսական և գործնական պարապմունքների անցկացման, կրթական բարեփոխումների, տեխնիկական միջոցներով, սարքավորումներով, ռեակտիվներով և այլ պարագաներով ուսումնական լաբորատորիաների հագեցվածության, պարապմունքներին ուսանողների հաճախումների,
  - գիտական խմբակներին ուսանողների մասնակցության, ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների,
  - պետական քննությունների և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման, մագիստրոսական թեզերի և գիտահետազոտական աշխատանքների նախապատրաստման և պաշտապանության,
  - դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական գրականության առկայության և գրադարանային սպասարկման, դասագրքերի, ուսումնամեթոդական գրականության գիտական հետազոտությունների արդյունքների հրատարակման,
  - ամբիոնների դասախոսների, գիտահետազոտական միավորումների գիտաշխատողների հաստիքավորման, ուսումնական ծանրաբեռնվածության որոշման,
  - համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության
  - կապիտալ և ընթացիկ վերանորոգումների, շինարարության, գույքի ձեռքբերման,

- համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների և մասնագետների կողմից հանրապետության գյուղատնտեսական ձեռնարկություններին, ֆերմերային տնտեսություններին մասնագիտական օգնություն ցույց տալու,
  - արտերկրի ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության,
  - միջազգային, տարածաշրջանային և ներքուհական գիտաժողովների, հոբբելյանական միջոցառումների նախապատրաստման,
  - նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ձևավորման, նոր կառուցվածքային միավորումներ ստեղծելու,
  - ֆակուլտետների, դեկանատների, ամբիոնների, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության աշխատանքների արդյունքների,
  - համալսարանի ստորաբաժանումներում գործավարության վարման,
  - համալսարանի գործունեությունը վերահսկող հանձնաժողովի աշխատանքների իրականացման,
  - կրթության որակի բարելավման, Բոլոնիայի գործընթացի ներդրման և այլ հիմնահարցերը:
- 4.3. Ռեկտորատի նիստը համարվում է իրավագոր նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են ռեկտորատի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և կենսագործվում ռեկտորի հրամաններով:
- 4.4. Ռեկտորատի արտահերթ նիստերը հրավիրվում են ռեկտորի նախաձեռնությամբ կամ ռեկտորատի անդամների 1/3-ի պահանջով:
- 4.5. Անհրաժեշտության դեպքում ռեկտորատի նիստում կազմակերպվում է համալսարանի գիտական խորհրդի հարցերի նախնական քննարկում:
- 4.6. Ռեկտորատի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամաններով կամ անհրաժեշտության դեպքում, ըստ կանոնակարգի, հարցը տեղափոխվում է գիտական խորհուրդ:

## **5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

5.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: